

Հակամարտություն Լեռնային Ղարաբաղի շուրջ

Ռուս-թուրքական պայմանավորվածությունների ավանդույթը

Հարյուրամյակներ ի վեր երբեք չկարգավիճակ. զեկուցում Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջ պատերազմի նախապատմության և ներկա իրավիճակի վերաբերյալ

Թեասա Հոֆման

Երբ լրատվամիջոցները լուսաբանում են Լեռնային Ղարաբաղի պատմությունը, ապա այն սովորաբար սկսվում է 1988 թվականին՝ Խորհրդային Միության փլուզումից երեք տարի առաջ: Այդ ժամանակ ինքնավար մարզի Գերագույն խորհուրդը հանդես եկավ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու դիմումով, որն Ադրբեջանը անմիջապես մերժեց: 1991 թ., երբ Ադրբեջանը դուրս եկավ ԽՍՀՄ կազմից, Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը:

Ադրբեջանի կողմից ռազմական ճանապարհով Ղարաբաղին տիրանալու փորձը երկուսուկես տարի անց տապալվեց՝ ղարաբաղահայության ուժգին դիմադրության շնորհիվ: Ռուսաստանի և Ղազախստանի միջնորդությամբ հաստատված զինադադարով հետխորհրդային Ադրբեջանը 1994 թ. մայիսին Ղարաբաղը ճանաչեց որպես բանակցային գործընթացի լիիրավ կողմ:

Նորագույն շրջանի պատմության այս ուրվագիծը՝ հեղինակների աշխարհաքաղաքական դիրքորոշմամբ պայմանավորված նրբերանգներով հանդերձ, բավարար չէ դրանից հետո շարունակվող հակամարտության իրազեկ և պատմականորեն հիմնավորված գնահատում կատարելու համար: Ուսումնասիրությունը պետք է սկսել ոչ ուշ, քան մ.թ.11-րդ դարից:

Ռուսաստանն ընդունեց օսմանցիների տարածքային պահանջները

Հայոց թագավորության կործանումից հետո Հայկական լեռնաշխարհում, բացառությամբ արևելյան Սյունիքի և Արցախի (Ղարաբաղ) եզրամասային շրջանների, այլևս գոյություն չունին անկախ իշխանություններ: 17-րդ դարի վերջին, երբ ներքին և արտաքին ճգնաժամերի պատճառով Իրանը թուլացել էր, Արցախի հինգ իշխաններ (մելիքներ) ստեղծեցին Խամսայի մելիքությունները՝ «Հինգի միասնական երկիրը»-ը, որի անկախությունը Իրանը պաշտոնապես ճանաչեց 1603 թվականից:

Երբ ապստամբությունները և մի աֆղանական ներխուժում 1719 թ. խարխլում էին պարսկական Սեֆյան տոհմի հզորությունը, օսմաններն օգտվեցին իրենց հին մրցակցի թուլությունից՝ Հարավային Կովկասում իրենց ազդեցության ոլորտն ընդլայնելու համար:

Ի հիասթափություն Արևելյան Վրաստանի և Հայաստանի՝ Ռուսաստանը դեռ այն ժամանակ ոչ միայն անտարբեր էր Հարավային Կովկասի քրիստոնյաների ուժասպառող պայքարի հանդեպ, այլև 1724 թ. Կ. Պոլսում ստորագրեց մի պայմանագիր, որով բավարարեց օսմանյան պահանջները մինչ այդ իրանական տարածքների, այդ թվում՝ Նախիջևանի, Գանձակի (Գյանջա), Կապանի և Արցախի նկատմամբ: Սկիզբ դրվեց ռուս-թուրքական տարածքային պայմանավորվածությունների ավանդույթին:

1804 թ. իրականացված՝ Ղարաբաղի բռնակցումը ռուսական պետությանը Իրանը հարկադրված եղավ ճանաչել ինը տարի անց՝ Գյուլիստանի պայմանագրով, որով ավարտվեց Հարավային Կովկասում գերակայության համար պայքարը, իսկ Դերբենդի, Բաքվի, Գյանջայի (Ելիզավետպոլ) և Ղարաբաղի նախկին պարսկական խանություններն անցան Ռուսաստանի վերահսկողության տակ: Երևանի բերդի գրավմամբ և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Երևանի և Նախիջևանի խանությունները նույնպես անցան Ռուսաստանին:

Դրանք վարչական առումով միավորվեցին մի՝ կարճ կյանք ունեցող «Հայկական մարզ»-ի մեջ (1828-1840), որը շատ հայերի մեջ պետական-ազգային վերածննդի հույս ներշնչեց: Այնուամենայնիվ, Ղարաբաղը մնաց էթնիկ և կրոնական առումով առանձնապես տարասեռ Ելիզավետպոլի նահանգի կազմում:

19-րդ դարում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությունը հակասական էր:

Ռուս հոգևորականները հայերին անվանում էին հերձվածողներ, իսկ գաղտնի ծառայությունները՝ հեղափոխականներ: Ռուսաստանի դեսպան և արտգործնախարար Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկին առաջ քաշեց «Հայաստանն առանց հայերի» արտահայտությունը:

1882 թ. ի վեր Ռուսաստանի վարչական ղեկավարության հարաճուն կարծր վարվելակերպը, Հարավային Կովկասի հաճախակի վարչատարածքային բաժանումները, որոնցում անտեսվում էին նրա աշխարհագրական և էթնիկական առանձնահատկությունները, ինչպես նաև ազգությունների հանդեպ վարվող՝ հաճախ բիրտ ուժի վրա հենվող քաղաքականությունը խարխլեցին շատ հայերի վստահությունն իրենց ենթադրյալ փրկիչների հանդեպ:

Որպես ինքնավար մարզ Խորհրդային Ադրբեջանի կազմում

Ռուսական պետության 1904-1905 թթ., ինչպես նաև 1917 թ. ճգնաժամերը հանգեցրեցին առաջին «հայ-թաթարական ընդհարումներին» փոխադարձ կոտորածներով՝ ամենից առաջ հայերի (Բաքու, 1918, 30.000 զոհ, Շուշի, 1920, 20.000 զոհ): Կարճ կյանք ունեցած Հայաստանի Հանրապետության (1918 թ. մայիսից մինչև 1920 թ. նոյեմբեր) թուլությունը, ինչպես նաև Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919 թ.) անտարբերությունը, որը չորոշարկեց Ղարաբաղի կարգավիճակը, վերջինիս ճակատագիրը 70 տարով հանձնեցին (խորհրդային) Ադրբեջանին:

Զնայած ադրբեջանցի և վրացի խորհրդային քաղաքական գործիչները, այդ թվում՝ Ստալինը, բազմիցս խոստացել էին 1920 թ. վերջից բազմիցս խոստացել էին Ղարաբաղը

միավորել Հայաստանին, բայց թուրք քեմալականների ճնշմամբ այն 1921 թ. հուլիսի 5-ին դրվեց Խորհրդային Ադրբեջանի վերահսկողության ներքո՝ որպես «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ»:

Այդ ինքնավարության կարգավիճակը, սակայն, տարածվում էր միայն 12.000 քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող պատմական Լեռնային Ղարաբաղի կենտրոնական մեկ երրորդի վրա (4.400 քառակուսի կմ). յոթ հարակից շրջանները չստացան ինքնավարության կարգավիճակ:

Հայերի թվաքանակը, որոնք 1923 թ. կազմում էին բնակչության 94 %-ը, Ադրբեջանի նպատակաուղղված ահաբեկումների, ձուլման, տեղահանության քաղաքականության և սոցիալ-տնտեսական ճնշումների հետևանքով նվազեց՝ կազմելով ընդհանուր 162 000 բնակչության 80,5 %-ը (1979 թ.): 1962 թվականից Ղարաբաղի հայերի կողմից ԽՄԿԿ բարձրագույն մարմիններին ուղարկված խնդրագրերն ու հուշագրերը մատնվեցին անուշադրության:

Անդրադարձ ազգային ինքնորոշման իրավունքին

Ինչի՞ հիման վրա է առաջ քաշվել այն պնդումը, թե միջազգային իրավունքի տեսանկյունից Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին: Այն ներկայացվում է ինչպես Ադրբեջանի, այնպես էլ հակամարտության կողմ չհանդիսացող պետությունների կողմից՝ չբնութագրվելով բավարար իմացությամբ: Իրավաբան Օտտո Լուխտերհանդտը, օրինակ, համոզիչ կերպով հակադարձել է այդ տեսակետին՝ այն փաստարկով, որ Ղարաբաղի հայերի ազգային ինքնորոշման իրավունքն ավելի արժեքավոր է, քան Ադրբեջանի տարածքային ամբողջականության իրավունքը:

Թեև Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն ճանաչված չէ, բայց այն «ունի փաստացի պետության բոլոր հատկանիշները», - վերջերս նշում էր նաև Հարավային Կովկասում ԵԱՀԿ նախկին հատուկ բանագնաց Գյունթեր Բեխլերը Արևելատվրոպական ուսումնասիրությունների գերմանական ընկերության կողմից կազմակերպված տեսաբանավեճում:

Այդ կարգավիճակի հիման վրա, ըստ բանախոսի, «Արցախի Հանրապետությունը» բռնության արգելման միջազգային իրավունքով պաշտպանված է հարձակումներից և ինքնապաշտպանության իրավունք ունի: Ադրբեջանի՝ կրկնվող զինված հարձակումները նույնպես են հակասում միջազգային իրավունքին, ինչպես դրանց Թուրքիայի կողմից ցուցաբերվող համապարփակ աջակցությունը:

Բայց միջազգային իրավունքի խախտումների պատժումն ո՞վ է իրականացնում կոնկրետ դեպքում: Հենց դրա համար կարիք կա հայացք նետել տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի և չպարզաբանված կարգավիճակային խնդիրների դարավոր պատմությանը:

Խաղաղության հաստատումը, որը ԵԱՀԿ Մինսկի խումբը 1994 թ. ի վեր փորձում է նախապատրաստել, առայսօր տեղի չի ունեցել: Հայաստանը (2007-2009 թթ.) անվտանգության նկատառումներով մերժեց նրա «Մադրիդյան սկզբունքները», որոնք նախատեսում են 1992 թ. ի վեր հայկական զինված ուժերի կողմից վերահսկվող յոթ շրջանների հանձնում և հարյուր հազարավոր ադրբեջանցի փախստականների վերադարձ: Փոխարենը, ակնհայտորեն, հայ պետական-քաղաքական գործիչները հետամուտ էին փաստացի իրադրության պահպանմանը:

Նավթով հարուստ Ադրբեջանը, սակայն, իր տարածքային պահանջները չէր մոռացել և 2004-2015 թթ. ամենամյա շարունակ աճող ծախսերով սպառազինվում էր, ինչը նշանակալից չափով ավելի աղքատ Հայաստանին դրդեց մտնել սպառազինությունների մրցավազքի մեջ: Ադրբեջանին զենք են մատակարարում ոչ միայն Թուրքիան և Իսրայելը, այլև Ռուսաստանը, որը միաժամանակ զենք է մատակարարում նաև Հայաստանին:

Ռուսաստանի դերը Հարավային Կովկասում մնում է երկիմաստ, քանի որ հայերի ենթադրյալ պաշտպանը Թուրքիայի և՛ առևտրային գործընկերն է, և՛ աշխարհաքաղաքական-ռազմավարական մրցակիցը: Հայաստանի և Ադրբեջանի

տարածքային, բնակչության և ռազմական անհամաչափությունը բնութագրում է նաև նրանց պաշտպանող տերությունների անհավասար ներգրավվածությունը:

Մինչ Թուրքիան 1992 թ-ից ի վեր նյութատեխնիկական օգնության և ռազմական խորհրդատուների միջոցով աջակցում է իր՝ ադրբեջանական «եղբայր ժողովրդին», Ռուսաստանը վեց շաբաթ շարունակ անգործ սպասում էր՝ տեսնելու, թե ինչպես էին հայկական զինված ուժերը մաշվում ադրբեջանցիների, ջիհադականների և սիրիացի վարձկանների դեմ պայքարում:

«Խաղաղության պահպանման և կայունության հաստատման համար ռուսական զորքերի ներկայիս տեղակայումը հիմնված չէ միջազգայնորեն համաձայնեցված որևէ մանդատի վրա», - քննադատորեն նշում էր փորձագետ Գ. Բեխլերը: Արցախում/Ղարաբաղում մարդկանց համար իրենց հայրենիքի չպարզաբանված կարգավիճակը և Ռուսաստանի խաղաղապահ առաքելության հետ կապված անորոշությունները նշանակում են կյանքի և գույքի տևական անապահովություն:

Հրապարակվել է «Tagesspiegel»-ում, <https://www.tagesspiegel.de/wissen/konflikt-um-berg-karabach-tradition-russisch-tuerkischer-absprachen/26654820.html>

25.11.2020, ժամը 17:14